600.0309.09.09.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 սեպտեմբերի 2020 թվականի №309Ա

քաղ. Երևան

«ԱՐՏ-ՆԵԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը և հաշվի առնելով «ԱՐՏ-ՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի օգոստոսի 10-ի և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի սեպտեմբերի 1-ի №01/11.1/4697-2020 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ԱՐՏ-ՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակից Ռազմիկ Մարտիրոսյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասից 50-ական տոկոս Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ Արմեն Սարգսյանին և Նաիրա Խաչատրյանին օտարելուն:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով տրված համաձայնությունը գործարքի կնքման համար վավեր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում:
3. «ԱՐՏ-ՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքների կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել դրանց առնչվող փաստաթղթերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐՏ-ՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
9 սեպտեմբերի 2020թ.